գորգ, գեղեցիկ հայ-  
լի մը, եւ մաքուր  
վարագոյրներ :

De plus, il y a des ar-  
moires aux deux cô-  
tés de la cheminée.

Անկէ գատ, ծխանին  
երկու կողմն այ  
դարաններ կան :

Oui, il y a tout ce qui  
est nécessaire.

Այո, ամեն հարկաւոր  
եղած բանը կայ :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Faites-moi voir les  
chambres à coucher.

Պատկելու սենեակ-  
ներն ինծի ցուցու-  
ցեք :

Par ici, Monsieur, s'il  
vous plaît.

Ասկէց հրամեցեք, Պա-  
րոն :

Voyons si le litest bon,  
car c'est là le princi-  
pal.

Տեսնենք անկողինն  
ինչպէս է, վասն զի  
գլխաւոր բանն այն  
է :

Quand j'ai un bon lit,  
je ne me soucie  
guère du reste.

Երբոր աղէկ անկողին  
մը ունիմ, ուրիշ  
բան հոգս չէ :

Vous ne pouvez en dé-  
siner un meilleur.

Չէք կրնար ասկէց  
աղէկին փախաքիլ :

La chambre donne-  
t-elle sur la rue.

Սենեակը փողոցի վե-  
րամ է :

Non, Monsieur ; elle a  
vue sur le jardin.

Չէ, Պարոն. պարսի-  
զին վերայ կը նայի :

Tant mieux. Je n'aime point à me coucher sur le devant à cause du bruit des voitures.

Désirez-vous voir l'autre pièce?

Je pense que le lit en est bon. Maintenant il ne s'agit plus que du prix.

MÊME SUJET.

Que demandez-vous des trois chambres avec la cuisine?

J'ai toujours loué la salle avec une des chambres quarante francs.

Vous paierez un napoléon par semaine pour le tout.

Ce n'est que quarante francs pour l'autre chambre et la cuisine.

Je crois que c'est beaucoup d'argent.

Considérez que c'est ici un des plus beaux

Աւելի լաւ : Կառքերու ձայնին համար ամենեւին չեմ սիրեր փողոցի վերայ եղած կողմը պառկի :

Մէկայ սենեակն ալ կուզե՞ք տեսնել :

Կարծեմ թէ անոր անկողինն ալ աղէկ է : Հիմա խնդիրը գնոյն վերայ կը մնայ :

ՆՈՅՆ.

Այս երեք սենեկին ու խոհակերոցին համար ինչ կուզե՞ք :

Սրահը սենեակներէն մէկուն հետ միշտ քառասուն ֆրանքի վարձած եմ :

Ամենուն համար շաբարը մէկ նափոյտն կուտարք :

Մէկայ սենեկին ու խոհակերոցին համար քառասուն ֆրանք միայն կը մնայ :

Կարծեմ թէ շատ սուղ է :

Այն ալ գիտնալու է որ ասիկայ քաղա-

quartiers de la ville, où les maisons sont d'un prix exorbitant.

Hé bien, je vous donnerai un napoléon.

Mais il me faut une partie de la cave, et un endroit pour mettre du bois et du charbon.

Cela va sans dire. Vous aurez une place fermant à clef.

Quand comptez-vous prendre possession de votre logement ?

Je compte venir coucher ici ce soir.

Faites en sorte que tout soit prêt de bonne heure.

Cela suffit, Monsieur. Vous pouvez venir aussitôt qu'il vous plaira.

AVEC UN TAPISSIER

Je voudrais bien voir quelques meubles.

քին գեղեցիկ բաղերէն մէկն է, ուր տներու գինը կարգէ դուրս սուղ է :

Աղէկ, նափոյտն մը կուտամ :

Բայց պէտք է ինծի տաք նաեւ շտեմարանին մէկ մասը, եւ փայտ ու ածուխ դնելու տեղ մը :

Անոր տարակոյս չրկայ : Բանալիքով զոց տեղ մը պիտի ունենաք :

Բնակարանին մէջ երբ պիտի մտնեք :

Այս գիշեր հոս պառկելու միտք ունիմ :

Այնպէս ըրե՞ք որ ամէն բան կանուխկէկ պատրաստ ըլլայ :

Այսչափս բաւական է Պարոն : Երբոր կուզե՞ք կրնաք գալ :

ՊԱՍՏԱՌԱԳՈՐԾԻ ՀԵՏ.

Բանի մը կան կուզեի տեսնել :

- Donnez-vous la peine d'entrer, Monsieur. Je crois pouvoir vous arranger.
- Quels meubles désirez-vous voir ?
- J'ai besoin d'une bibliothèque, si je puis en trouver une propre.
- En voici une très-belle.
- Je l'ai achetée hier à une vente.
- Elle est d'un bois superbe.
- Je l'aimerais assez. — Elle me conviendrait assez.
- Combien en demandez-vous ?
- Combien comptez-vous la vendre ?
- Le prix est de douze francs.
- Vous ne pouvez pas la donner à moins ?
- Je ne le peux pas, Monsieur. Le plus bas prix est marqué sur chaque article dans ma boutique.
- C'est la meilleure manière.
- Հրամեցեք, ներս մըտեք, Պարոն: Կարծեմ թէ ուզածնիդ ունիմ:
- Ի՞նչ կահ տեսնել կուգէք:
- Թեոր մարուր գրարան մը գտնեմ՝ պիտի գնեմ:
- Անա ձեզի գեղեցիկ գրարան մը: Երեկ անուրդէ մը գնեցի:
- Փայտը շատ գեղեցիկ է:
- Բաւական կախորժիմ: — Բաւական կըլարմարի ինձի:
- Ի՞նչ կուգէք ասոր:
- Քանիով կուգէք ծախել:
- Գինը տասուերկու ֆրանք է:
- Անիկ պակաս չէք կրնար տալ:
- Չեմ կրնար, Պարոն: Խանութիս մէջ ամեն ապրանքին վերջի գինը վերան նշանած է:
- Աղէկն ալ այն է:

## MÊME SUJET.

ՆՈՅՆ.

- Maintenant, je désirerais voir une com-mode.
- En voici plusieurs, avec le prix marqué sur chacune.
- Je crois que je m'en tiendrai à celle-ci.
- Maintenant, que je voie vos tapis.
- Quelle grandeur désirez-vous.
- Six mètres sur cinq.
- En voici de toutes les sortes.
- Voyons les prix.
- Ceux-ci montent à beaucoup d'argent.
- Ceux-ci montent bien haut.
- En voici à meilleur marché. Mais ils ne sont, naturellement, ni si beaux ni si bons.
- J'aimerais assez celui-ci. Mais il revient si cher.
- Հիմա գգեստարան մը կուգեմ տեսնել:
- Անա ձեզի շատ մը գգեստարան, ամեն մեկուն վերայ ալ գինը նշանուած:
- Կարծեմ թէ ասիկայ պիտի առնեմ:
- Հիմա գորգերդ տեսնեմ:
- Ի՞նչ մեծութեամբ կուգէք:
- Երկայնութիւնը վեց մետր, բայնութիւնը հինգ:
- Անա ամեն տեսակէն ալ:
- Գիները տեսնենք:
- Ասոնք շատ սուղ են:
- Ասոնց գիները շատ բարձր են:
- Անա աւելի արժան գորգեր: Բայց ասոնք բնականապէս ոչ այնչափ գեղեցիկ են եւ ոչ այնչափ աղէկ:
- Ասիկայ բաւական սիրեցի: Բայց շատ սուղ է:

Non, Monsieur. Vous le trouverez bon marché, si vous en considérez la grandeur.

Les tapis sont un article bien coûteux.

Voudriez-vous en voir d'occasion?

Non. Je prends celui ci.

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Ձե, Պարոն: Մեծու: քիւնր մտածելու ըլլաք նե, շատ ա: ժան կը գտնեք:

Գորգ ըսածդ շատ սուղ բան է:

Գործածուած գորգ տեսնել կուզեք:

Ձե: Ասիկայ կառնում:

N'avez-vous pas besoin d'autre chose?

Avez-vous besoin d'autre chose?

De quel prix sont ces chaises?

Quel peut être le prix de ces chaises?

Le prix est de deux francs par chaise.

Elles devraient être bonnes pour ce prix.

Ces chaises sont magnifiques.

Ces chaises sont de la première qualité, et à la dernière mode.

Ուրիշ բան չեք ուզեր:

Ուրիշ բանի կարօտուրիւն ունիք:

Այս արողներուն գինն ինչ է:

Այս արողներուն գինն ինչ կրնայ ըլլայ:

Հատը երկու ֆրանք է:

Գնոյն նայելով՝ պէտք է որ աղէկ ըլլան:

Այս արողները շատ փառատը են:

Այս արողներն առաջին տեսակն են, եւ խիստ նորածնէ:

Considérez qu'elles sont faites du plus beau bois, et parfaitement bien finies.

Elles ont été faites par le meilleur ouvrier de Paris.

J'aime assez les chaises, mais je n'en aime pas le prix.

Je remettrai cette emplette à une autre fois.

Eh bien! vous m'enverrez cela le plus tôt possible.

Vous l'aurez dans le courant de la journée.

Ne me trompez pas. Vous pouvez y compter.

POUR ACHETER DIFFÉRENTS OBJETS.

Voulez-vous venir à la ville avec moi?

De tout mon cœur.

Qu'avez-vous à faire dans la ville?

Il faut que j'aille chez le marchand de nouveautés.

Պիտե՛ք որ շատ գեղեցիկ փայտէ շինուած են, ու ամեն կերպով լաւ բանած:

Փարիզու ամենէն վարպետ գործաւորին շինածներն են:

Արողները բաւական սիրեցի, բայց աւանց գինը չսիրեցի:

Այս գնելիքս ուրիշ անգամի կը բողում:

Ուրեմն, որչափ կարելի է՝ շուտով խրկեցեք ինձի ասոնք:

Այսօր կառնուք:

Զիս չխաբեք: Կրնաք վստահ ըլլալ:

ԱՅՆ ԵՒ ԱՅՆ ՔԱՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՎԵՐԱՅ.

Ինձի հետ քաղաքը կուզա՞ք:

Ամենայն սիրով:

Ի՜նչաքը ինչ ունիք ընելու:

Պէտք է որ նորելուկ լաբեր ծախողին լաւանութն երբամ:

J'ai quelques emplettes à faire.

Qu'est-ce que vous avez à acheter?

Je veux acheter de la dentelle.

J'ai besoin de calicot.

Il me faut de la toile pour faire des draps.

N'avez-vous pas vous-même besoin d'acheter quelque chose?

Rien de particulier.

A moins que je ne voie quelque chose qui me frappe.

Peut-être verrons-nous de nouveaux dessins d'indiennes.

Vous me faites penser que j'ai besoin de mérinos.

Ne me laissez pas oublier d'acheter des mouchoirs.

Je vous y ferai penser.

Partons sur-le-champ, car il faut que nous soyons revenus pour le thé.

Nous avons une grande heure à nous.

Քանի մը բան պիտի գնեմ:

Ի՞նչ բան պիտի գնես:

Հիւսկեն պիտի գնեմ:

Քալիքոյ պիտի գնեմ:

Սաւան շինելու կտաւ պիտի առնեմ:

Հրամանքդ այ գնելու բան մը չունիս:

Մասնաւոր բան մը չունիմ:

Բայց երբ այնպիսի բան մը տեսնեմ որ շատ հաւնիմ:

Գուցէ նորատիպ հրնդ կակտաւներ տեսնեմք:

Աղէկ միտքս ձգեցիք, ինձի մերթնոս հարկաւոր է:

Թաշկինակ գնելիքս չմոռնամ:

Մտքերնիդ կը ձգեմ:

Շուտով երբանք վասն զի պէտք է որ չայի առեն հոս գտնուինք:

Գետ ամբողջ ժամ մը ունինք:

Nous serons revenus avant ce temps-là.

Անկէց առաջ կը հասնինք:

ANECUNTAILLEUR.

ԳԵՐԶԱԿԻ ՄՐ ՀԵՏ.

Je vous ai envoyé chercher pour me prendre la mesure d'un habit.

Զհրամանքդ կանգել տուի որ ինձի թիկնոցակի մը չափ առնուս:

Voulez-vous bien me prendre la mesure pour un habit.

Խնդրեմ, ինձի թիկնոցակի մը չափն առ:

Comment voulez-vous qu'il soit fait?

Ի՞նչ ձեւ կուզեք որ շինեմ:

Faites-le moi comme on les porte actuellement.

Հիմա ինչ ձեւով որ կը հագուին՝ այնպէս շինէ:

Vous voulez aussi le gilet et le pantalon?

Բաճկոն ու տափառ այ կուզեք:

Oui. J'ai acheté du drap pour me faire un habillement complet.

Այո. ամբողջ հագուած մը շինելու համար չուխայ գնեցի:

Cela suffit, Monsieur. Comment voulez-vous que votre gilet soit fait?

Գլխուս վերայ, Պարոն: Բաճկոննիդ ինչ ձեւով կուզեք:

Faites-le à la mode actuelle.

Հիմակուան ձեւով ըրէ:

Seulement, qu'il ne descende pas tout à fait si bas.

Միայն թէ այնչափ շատ վար չիջնայ:

Quellesorte de boutons  
voulez-vous ?

Je veux des boutons de  
la même étoffe.

Fort bien.

Faites-moi un pantalon  
à sous-pieds.

Faites-le bien large. Je  
n'aime pas à être gêné  
Ne craignez rien.

Voulez-vous que votre  
pantalon monte bien  
haut ?

Ni trop haut ni trop  
bas.

Faites-le venir jus-  
qu'ici.

Je ne veux point qu'il  
descende tout à fait  
si bas qu'on les porte  
aujourd'hui.

C'est la mode de les  
porter très-bas.

Oui, mais c'est une mo-  
de ridicule.

Il sera fait selon votre  
gôût.

Souvenez-vous qu'il  
me faut ceci pour di-  
manche, sans faute.

Ի՞նչ տեսակ կոճակ  
կուզեք :

Կուզեմ որ կոճակ-  
ներն ալ նոյն նիւ-  
թէ ըլլան :

Շատ աղէկ :

Ինձի տափառ մը շի-  
նէ որ ներբանա-  
փոկ ունենայ :

Աղէկ լայն ըրէք : Ձեմ  
ուզեր որ նեղուիմ :

Հոգ մ'ընէք :

Կուզեք որ տափառը  
շատ վեր ելլէ :

Ոչ շատ վեր եւ ոչ  
շատ վար :

Ինչուան հոս գայ :

Ինչպէս որ հիմա կը-  
նեն, չեմ ուզեր որ  
անանկ շատ վար  
իջնայ :

Հիմակուան նորաձե-  
տութիւնն է ասանկ  
շատ վար ընել :

Այո, բայց ծաղրական  
նորաձեւութիւն մըն  
է :

Ձեր ուզածին պէս կը-  
նեմ :

Գիտցած ըլլաք որ  
անվրեպ կիրակի  
օրուան համար կու-  
զեմ :

Vous l'aurez dimanche  
matin.

Prenez garde, car si  
vous me manquez  
de parole, c'est le  
dernier ouvrage que  
vous ferez pour  
moi.

Կիրակի առաւօտ  
կանուրք :

Աղէկ նայեցէք, երէ  
խօսքերնիդ չպա-  
հէք, ասիկայ ինձի  
համար վերջի ըրած  
գործերնիդ կըլ-  
լայ :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

M'apportez-vous mon  
habit ?

Oui, Monsieur. Le voi-  
ci.

Vous êtes un homme  
de parole. Mais, fran-  
chement, je com-  
mençais à m'impa-  
tienter.

Il n'est que dix heures,  
et je vous l'avais pro-  
mis dans le courant  
de la matinée.

Aussi, je ne me plains  
pas.

Que je l'essaie.

Essayez-le moi.

Voyons s'il me va bien.

Voyons comment il me  
va.

Vous avez fait les man-  
ches trop longues et  
trop larges.

Թիկնոցակս բերիք :

Այո, Պարոն : Ահաւա-  
սիկ :

Խօսքի տեր մարդ էք :  
Բայց, շիտակն ը-  
սեմ, համբերու-  
րիւնս հատենելու վե-  
րայ էր :

Պէտ ժամը տասն է,  
եւ ես կէսօրէն ա-  
ռաջ բերելու խօսք  
տուեր էի :

Անոր համար ես ալ  
չեմ գանգատիր :

Մէյմը փորձեմ :

Վերաս փորձէ :

Նայինք աղէկ կու-  
գանջ :

Տեսնենք ինձի ինչ-  
պէս է :

Թեւերը շատ երկայն  
ու շատ լայն ըրեր  
էք :

Monsieur, on les porte maintenant très-grandes.

Պարոն, հիմա քեւերը շատ լայն կրնեն :

Il m'est trop juste.

Շատ նեղ է :

Il me serre sous les aisselles.

Անքերս շատ կը նեղէ :

Il me coupe les bras.

Թելերս կը կտրէ :

N'est-il pas un peu long?

Ի՞նչ մը երկայն չէ :

Il me semble un peu trop long.

Ինձի թիջ մը շատ երկայն կերեալ :

Il est trop long de taille.

Խիստ շատ երկայն է :

Il est trop court de taille.

Խիստ կարճ է :

Il fait des plis entre les épaules.

Ուսերուն մեջտեղուանքը փոք փոք է :

Vous ne pouvez pas vous plaindre de cet habit.

Այս քիկնոցակին ըսելիք չունիք :

Il vous va à ravir.—Il vous va parfaitement bien.

Ձեզի շատ աղէկ յարմարեցաւ : — Ձեզի սքանչելի կերպով յարմար է :

Vous n'avez jamais été mieux habillé.

Գեո ասանկ աղէկ հագուստ չէիք ունեցած :

Vous autres tailleurs, vous ne trouvez jamais rien à redire à votre ouvrage.

Գերձակները իրենց գործքին երբէք պակասութիւն չեն գտներ :

AVEC UN CORDONNIER.

ԿՕՇԿԱԿԱՐԻ ՀԵՏ.

Monsieur, j'ai besoin d'une paire de souliers.

Պարոն, ինձի գոյգ մը մուճակ հարկատր է :

Veillez me prendre la mesure pour une paire de souliers.

Ոտքիս չափն առնուիք որ ինձի գոյգ մը մուճակ շինեք :

J'ai déjà votre mesure.

Արդէն չափերնիդ ունիմ :

Ayez bien soin de les faire assez larges.

Շայեցեք որ լայնկէկ ըլլան :

Ne les faites pas trop étroits.

Շատ նեղ չընեք : —

Soyez tranquille, Monsieur.

Հոգ մ'ընեք, Պարոն :

Vous avez ce défaut-là; vous les faites généralement trop étroits

Այս պակասութիւնն ունիք. ընդհանրապէս շատ նեղ կընեք :

J'aurai soin de faire ceux-ci comme vous le désirez.

Կը ջանամ որ ասիկայ ուզածնուդ պէս ընեմ :

Quand pourrez-vous me les donner?

Ե՞րբ կրնաք տալ :

Je vous les enverrai vers la fin de la semaine.

Շաբթուս վերջերը ձեզի կը ղրկեմ :

Vous les aurez au commencement de la semaine prochaine.

Գալ շաբթուն սկիզբը կուսամ :

Ne me manquez pas.

Զըլլայ բէ ուշացը նեք :

Vous pouvez compter sur ma promesse.  
 Avez-vous besoin d'autre chose ?  
 Maintenant que j'y pense, il me faut une paire de bottes fines.

Երեսուժանս վրայ կըրնաք վստահանալ :  
 Ուրիշ բան կուզէք :  
 Հիմա միտքս եկաւ , գոյգ մըն ալ ազնիւ կոշիկ կուզեմ :

Faites-moi en même-temps des souliers de bal.  
 Je voudrais aussi une paire de pantoufles.  
 De quoi désirez-vous qu'elles soient faites ?  
 Je les voudrais en maroquin.  
 Faites-les le plus tôt possible.

Միանգամայն պարի մուճակ շինեցէք ինծի :  
 Զուխտ մըն ալ հողաբալի կուզէի :  
 Ինչքն կուզէք որ ընեմ :  
 Սեկէ կուզեմ :  
 Որքտի կարելի է շուտով ըրէք :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Monsieur, je vous apporte vos souliers.  
 Que je les voie.  
 — Voyons.  
 Permettez que je vous les essaie.  
 Non, je vous remercie.  
 Je veux les essayer moi-même.  
 Je ne peux faire entrer mon pied dedans.  
 Voici un chausse-pied.

Պարոն , մուճակնիդ բերի :  
 Տեսնեմ : — Տեսնենք :  
 Երէ հաճիք՝ հագցընեմ ձեզի :  
 Ձե , շնորհակալ եմ : Ինքնիբեռնս կը հագնիմ :  
 Ձեմ կրնար ոտքս մէջը խորել :  
 Ահա կոշկածիգ մը :

Il me faut des souliers que je puisse mettre sans peine.

Անանկ մուճակներ կուզեմ որ ոտուրներս դիւրաւ մտնեն մէջը :

Pourquoi les avez-vous faits si pointus ? Ce n'est pas la mode.

Ինչո՞ւ համար այնչափ սրածայր ըրերէք : Հիմակուան սովորութիւնը այս չէ :

Pardonnez-moi, on les porte actuellement ainsi.

Թողութիւն կընէք , հիմա ամենքը ասանկ կը հագնին :

Soit ; alors je ne veux pas me gêner pour suivre la mode.

Առէկ : Բայց ես չեմ ուզեր նորելով սովորութեան հետեւելու համար նեղութիւն քաշել :

Décidément ils me serrent trop.

Իրացրնէ ոտքս շատ կը նեղէ :

Ils me blessent les ortels.

Զափագանց նեղ եկ : Մատուրներս կը ցուցնեն :

Vous les avez faits trop pointus.

Շատ սրածայր ըրերէք :

Ils me font mal.

Ոտքս կը ցուցնեն : Բիչ մը հագնելէն ետքը կը լայնան , կը բացուին :

Ce cuir-ci prête comme un gant.

Այս կաշին ձեռնոցի պէս կը բացուի :

Oui. Mais en attendant qu'ils s'élargissent, je ne veux point être estropié.

Այէկ : Բայց ինչուան որ բացուին չեմ ուզեր ոտուրներս աւրել :

Je ne saurais marcher avec.

Vous ne les aurez pas portés deux jours, qu'ils ne vous blesseront plus.

Je vous ai dit plusieurs fois que je ne voulais point être gêné dans mes souliers.

Je ne veux point gagner de cors.

Je veux avoir le pied à mon aise.

Le cuir est mauvais. L'empeigne ne vaut rien.

Les semelles sont trop minces.

Les quartiers sont trop bas.

Je ne veux point avoir le pied découvert.

Les talons sont beaucoup trop larges.

Je suis sûr que ces souliers n'ont jamais été faits pour moi.

Rempportez-les et faites-m'en une autre paire le plus tôt possible.

Աստեղծով չեմ կրնար քայլել :

Երկու օր չքշեք՝ կը բացուին, եւ ոտքերնիդ չեն ցաւցըներ :

Հրամանոցդ շատ անգամ ըսի թէ չեմ ուզեր որ ոտքի ամաններս զիս նեղեն :

Ամենեւին չեմ ուզեր որ ոտուկներուս վերայ կոշտեր ելլեն :

Կուզեմ որ ոտքս հանգիստ ըլլայ :

Կաշին գէշ է : Երեսի կաշին բանի չգար :

Ներբանները շատ բարակ են :

Քովերը շատ ցած են :

Ձեմ ուզեր որ ոտուկներս բաց մնան :

Կրունկները չափէ դուրս լայն են :

Ադէկ գիտեմ որ այս մուճակները ինծի համար շինուած չեն :

Ետ տարեք ասոնք, ու ինծի ուրիշ գոյգ մը շինեցէք որչափ կարելի է շուտով :

Avez-vous apporté mes bottes?

Oui, Monsieur, les voici.

La tige de cette botte est trop haute.

Je vous ai dit de faire les talons très-hauts.

Je ne puis pas souffrir les talons bas.

Prenez ces bottes, elles ont besoin d'être remontées.

Cette paire-là a besoin d'être ressemelée.

Mettez des demi-semelles à ces souliers.

N'oubliez pas d'y mettre quelques pointes.

Rendez-les moi bientôt.

Կօշիկներս բերիք :

Այո, Պարոն, անաւակի :

Այս կօշիկին բունը շատ երկայն է :

Հրամանոցդ ըսեր էի որ կրունկները բարձր ընէք :

Ցած կրունկ չեմ սիրեր :

Այս կօշիկներն առեք, նորոգութեան կարօտութիւն ունին :

Այս գոյգին ներբանները պետք է փոխել :

Այս մուճակներուն կես կես ներբան դրեք :

Չմոռնաք քանի մը զամ այլ գարնելու :

Շուտով ինծի դարձուցէք :

Վախեմ որ հրամանոցդ ձեռնառուութեանը կարօտ եմ :

AVEC UN MÉDECIN.

ԲԺՇԿԻ ՀԵՏ.

Monsieur, j'ai pris la liberté de vous envoyer chercher.

Je crains d'avoir besoin de votre assistance.

Պարոն, ներեցէք զձեզ կանչել տալուս :

Վախեմ որ հրամանոցդ ձեռնառուութեանը կարօտ եմ :

Comment vous trouvez-vous en ce moment? Հիմա ինչպես եք:

Je ne sais. Je me trouve tout je ne sais comment.

J'ai la tête tout étourdie, et j'ai de la peine à me tenir sur mes jambes.

Je ne suis pas bien du tout.

Je me sens bien malade.

Je suis d'une faiblesse étonnante.

Depuis quand êtes-vous malade?

Comment cela a-t-il commencé?

Cela me prit avant-hier par un frisson.

Ensuite j'ai transpiré beaucoup, et j'ai toujours été mal depuis.

Avez-vous senti des maux de cœur?

Oui, dans le premier instant, mais cela s'est dissipé, et il m'est resté un mal de tête épouvantable.

Չեմ գիտեր: Ինչպես ըլլալս ես այ որոշ ջեմ գիտեր:

Գլուխս բոլորովին բճրած է, եւ ոտքի վերայ կենալու կարողութիւն չունիմ:

Ամենեւին աղէկ ջեմ:

Սաստիկ հիւանդ եմ:

Վերաս կարգէ դուրս տկարութիւն մը կայ:

Հիւանդութիւննիդ մը սկսաւ:

Ի՞նչպես սկսաւ:

Երեկ ջէ առջի օրը դողով մը սկսաւ:

Ետքը վերաս շատ մը քրտինք եկաւ, անկէց ի վեր հիւանդ եմ:

Սրտի խառնուրդ ունեցամբ:

Այո, առջի բերան: Բայց ետքը անցաւ ու վերաս սաստիկ գլխուցամը մնաց:

## MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Où sentez-vous du mal actuellement?

J'ai des douleurs dans la tête.

J'ai un grand mal de tête.

Je sens des maux de cœur, et des envies de vomir.

Je sens du mal à l'estomac.

J'ai mal à la gorge.

Je sens des douleurs d'entrailles.

J'ai eu le frisson toute la nuit.

J'ai des douleurs dans le côté, et j'ai de la peine à respirer.

Vous sentez-vous un peu d'appétit?

Je n'ai presque rien mangé depuis deux jours.

Voyons votre langue. —Montrez-moi votre langue.

Vous avez la langue un peu chargée.

Il y a de l'humeur dans l'estomac.

Հիմա ո՞ր տեղերնիդ կը ցաւի:

Գլուխս կը ցաւի:

Սաստիկ գլխու ցաւ մը ունիմ:

Սիրտս կը խառնուի, ու ետ զայ կուզէ:

Ստամոքս կը ցաւի:

Կոկորդս կը ցաւի:

Ընդերացս մէջ ցաւ կը զգամ:

Բոլոր գիշերը դողացի:

Կողս կը ցաւի, ու դժուարաւ շունչ կառնում:

Ախորժակ ունիք:

Երկու օրէ ի վեր բերանս բան ջեմ դրած:

Լեզունիդ տեսնեմ: — Լեզունիդ ցուցուցեք:

Լեզունիդ քիչ մը աղտոտ է:

Ստամոքսնիդ մաքուր ջէ:

Il vous faudra prendre une petite médecine.

Պետք է որ թերեւ մաքրողական մը առնուք :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Donnez-moi votre bras. Que je vous tâte le pouls.

Թելերնիդ տուէք : Երակնիդ նայիմ :

Votre pouls est un peu agité.

Երակնիդ քիչ մը այլայլած է :

Votre pouls est dur. Il y a de la fièvre.

Երակնիդ պինդ է : Վրանիդ տաքութիւն կայ :

Vous avez un peu de fièvre.

Քիչ մը տաքութիւն ունիք :

Croyez-vous ma maladie dangereuse ?

Հիւանդութիւնս արդեօք վտանգաւոր է :

Non. Mais il faut prendre garde qu'elle ne le devienne.

Ոչ : Բայց զգուշանալու է որ վտանգաւոր չըլլայ :

Que faut-il que je fasse ?

Ի՞նչ պէտք է որ ընեմ :

Je vous enverrai quelque chose à prendre et vous reverrai demain matin.

Բան մը կը ղրկեմ որ խմէք, ու վաղը առաւօտ նորէն կուգամ տեսնելու :

Ai-je autre chose à faire ?

Ուրիշ բան պէտք է ընեմ :

Non. Ayez seulement soin de vous tenir chaudement.

Ոչ : Միայն նայեցէք որ տաք կենաք :

Tâchez de ne point attraper de froid.

Նայեցէք որ պաղ չառնուք :

Nous verrons demain, s'il n'est pas à propos de tirer un peu de sang.

Վաղը կը նայինք թէ պէտք է քիչ մը արիւն հանել :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Comment avez-vous passé la nuit ?

Գիշերն ինչպէս անցուցիք :

Comment vous trouvez-vous depuis hier ?

Երեկուան վերայ այսօր ինչպէս էք :

Je me sens beaucoup mieux.

Շատ աւելի լաւ եմ :

Je n'ai pas été si agité, et j'ai un peu dormi.

Գիշերն այնչափ անհանգիստ չէի, ու քիչ մը քնացայ :

La fièvre est beaucoup diminuée.

Տաքութիւնս շատ թեթեւաւ :

La fièvre est presque tombée.

Տաքութիւնս՝ ջերմս գրեթէ բոլորովին անցաւ :

Sentez-vous encore du mal a l'estomac ? au côté ? etc.

Ստամոքսնիդ՝ կողերնիդ եւ այլն՝ ղեռ կը ցաւի :

Beaucoup moins. Je suis un peu soulagé.

Խիստ քիչ : Աւելի հանգիստ եմ :

Je vous enverrai encore une bouteille, que vous prendrez comme hier.

Ուրիշ շիշ մըն այձեզի ղրկեմ որ երեկուան պէս առնուք :

Je puis vous promettre que ce ne sera rien de sérieux.

Զեզի խօսք կուտամ որ այս ամենեւին ծանր բան մը չէ :

Dans deux ou trois jours vous serez guéri.

Երկու իրեք օրէն բո-  
լորովին կառողջա-  
նաւք :

VOITURES DE LOUAGE.

ԿԱՌՔ ՎԱՐՁԵԼՈՒ.

Où allez-vous ce ma-  
tin?

Այս առաւօտ հըր պի-  
տի երբաք :

Je vais faire des visites.  
— J'ai plusieurs vi-  
sites à faire.

Այցելութեան պիտի  
երբամ : — Շատ մը  
այցելութիւններ ու-  
նիմ ընելու :

Il faut que j'aille d'a-  
bord chez M. F\*\*\*.

Պէտք է որ նախ եր-  
բամ Պ. Ֆ\*\*\*ին  
տունը :

Vous ne le trouverez  
pas chez lui.

Զինքը տունը չէք  
գտնար :

Il est à la campagne.

Գեղն է :

En ce cas je laisserai  
une carte chez lui.

Անանկ է նե, տունը  
տոմսակ մը կը  
ձգեմ :

Ensuite j'irai voir notre  
ami B\*\*\*.

Ետքը պիտի երբամ  
մեր Բ\*\*\* բարեկամը  
տեսնելու :

Allez-y d'abord, et je  
vous accompagnerai.

Նախ հոն գացեք, ես  
ալ հետերնիդ կու-  
գամ :

Partons.

Երբանք :

Irons-nous en voiture  
ou à pied?

Կառքով պիտի եր-  
բանք թէ ոտքով :

Allons en voiture pour  
ne pas nous fatiguer.

Կառքով երբանք որ  
չյոզնինք :

Comme il vous plaira.  
Cherchons un fiacre.

Ինչպէս որ կը հասիք :  
Վարձու կառք մը  
փնտենք :

Nous trouverons une  
place dans la rue  
voisine.

Քովի փողոցին մեջ  
կառքի հրապարակ  
մը կընանք գտնել :

Voici un cabriolet, pre-  
nons-le.

Ահաասիկ երկանիւ  
մը, բռնենք :

Je préfère prendre une  
voiture de remise à  
l'heure.

Աւելի կուզեմ կառա-  
նոցի կառք մը բրո-  
նել ժամով :

Cocher, conduisez-  
nous rue\*\*\*.

Կառավար, տար գմեզ  
փողոց \*\*\* :

Descendez-nous au nu-  
méro 50.

Զմեզ 50 բնոյն առ-  
ջեւը վար իջեցուր :

Nous voici arrivés.

Ահա հասանք :

Déjà!

Ասանկ շուտ :

Cocher, voici le prix de  
votre course.

Կառավար, ահա ըն-  
քացքիդ վարձը :

Et voici votre pour-  
boire.

Ահա նաեւ ձեռա-  
ձիրդ :

DANS UN OMNIBUS.

ՀԱՄԱԿԱՌՔԻ ՄԵՋ.

Faites signe au cocher  
de s'arrêter.

Կառավարին նշան  
տուր որ կենայ :

Appelez le conducteur.

Ուղեցոյցը կանչեք :

Il n'y a pas de place.

Տեղ չկայ :

Nous sommes au com-  
plet.

Տեղերը լեցուն են :

Il n'y a qu'une place.

Մեկ տեղ մը միայն  
կայ :

Il faut attendre.

Պէտք է սպասել :

Voici un autre omnibus.

Il ne va pas du même côté.

Conducteur, où allez-vous ?

Nous allons à la Bourse.

Voici l'omnibus qu'il nous faut prendre.

Montons.

Montez d'abord.

Je ne puis pas m'asseoir.

Monsieur, voulez-vous avoir la bonté de reculer un peu ?

Asseyez-vous dans ce coin.

Nous allons très-lentement.

La rue est encombrée de voitures.

Nous n'avançons pas.

Quand je suis pressé, je ne monte jamais en omnibus.

Où sommes-nous maintenant ?

Nous sommes dans la rue\*\*\*.

Conducteur, descendez-moi au coin de la rue\*\*\*.

Ահա ուրիշ համա-կառք մը :

Շոյն կողմը չերբար :

Ուղեցոյց, ո՞ւր կերբար :

Սակարան կերբանք :

Ահա այս համակառք պէտք է մտնենք :

Մտնենք :

Գուր նախ մտեք :

Ձեմ կրնար նստիլ :

Պարոն, շնորհք ընէիք՝ քիչ մը ետև երբայիք :

Սա անկիւնը նստեցէք :

Շատ ծանր կերբանք :

Փողոցին մէջ կառքերը լեցուեր են :

Առաջ չենք երբար :

Երբոր փութով կուգեմ հասնիլ, ամենեւին համակառք չեմ նստիլ :

Հիմա ո՞ւր ենք :

\*\*\*Փողոցին մէջն ենք :

Ուղեցոյց, զիս \*\*\* փողոցին անկիւնը ի՞նչեցուր :

Arrêtez, s'il vous plaît.

Laissez-moi descendre d'abord.

Prenez garde. Donnez moi la main.

Tenez mon bras. Ne vous pressez pas.

AVANT LE DÉPART.

Avez-vous quelque commission pour Londres ?

Est-ce que vous allez à Londres ?

Oui. Y a-t-il quelque chose que j'y puisse faire pour vous ?

Vous êtes bien aimable.

Quand comptez-vous partir ?

Je pars demain matin.

Allez-vous par la diligence ?

Non. J'ai commandé une chaise de poste.

Je vais par le chemin de fer.

Ինչդեմ, կեցէք :

Թողէք որ նախ ես իջնամ :

Չգուշորիւն ըրէք : Ձեռքերնիդ տուէք :

Թեւ բռնեցէք : Մի աճապարէք :

ՃԱՄԲԱՅ ԵՒ ԼԵԼԷՆ ԱՌԱՋ.

Լոնտրայի համար յանձնարարութիւն մը ունիք :

Լոնտրա՞մ կերթաք :

Այո : Հոն բան մը ունիք որ կարենամ ընել :

Շատ շնորհակալ եմ ձեր բարեսրտութեանը :

Ե՞րբ միտք ունիք ճամբայ ելլելու :

Վաղը առաւօտ ճամբայ կ'ելլեմ :

Ճեպընթացով պիտի երթաք :

Ոչ : Պրատարի կառքին մէջ տեղ մը բռնել տուի :

Երկաթուղիով պիտի երթամ :

Combien de temps comptez-vous y rester?

Quand serez-vous de retour?

Je compte rester quatre ou cinq jours.

Mais je crains d'être retenu plus longtemps.

Cela est très probable.

C'est pourquoi il vaut mieux compter sur un plus long séjour.

Si je puis vous y être utile, dites-le-moi.

S'il y a quelque chose que je puisse faire pour vous, je m'en chargerai avec plaisir

Je profiterai de votre offre obligeante, et je passerai chez vous dans la soirée.

Vous êtes sûr de me trouver à la maison.

VOYAGE EN CHEMIN DE FER.

Avez-vous fait tous vos préparatifs de départ?

Հոն որչափ ժամանակ կենալու միտք ունիք:

Ե՞րբ պիտի դառնաք:

Չորս հինգ օր կենալու միտք ունիմ:

Բայց վախեմք բե աւելի բռնուիմ:

Շատ հաւանական է:

Անոր համար աւելի երկար առեն կենալը աջք առնելու է:

Թեոր կրնամ հոն ձեզի ծառայութիւն մը ընել, ըսէք ինձի:

Թեոր բան մը կայ որ կարենամ ձեզի համար ընել, սիրով յանձն կառնում:

Ձեր բարեբարութիւնը վայելելու համար այս իրիկուն տներնիդ կուզամ:

Ապահով եղիք որ գիտունը կը գտնէք:

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՎ, ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ.

Ճամբու պատրաստութիւնները տեսա՞ք:

Tout est prêt.

Faites venir un commissionnaire pour porter mes effets.

Je prendrai l'omnibus du chemin de fer.

Portez ces effets au bureau de l'omnibus.

Quand partez-vous?

Nous partons dans cinq minutes, Monsieur.

Montez en voiture, s'il vous plaît.

Il me semble qu'il est bien tard.

Dans combien serons-nous à l'embarcadere.

Nous y serons dans un quart d'heure.

J'ai peur que vous n'arriviez trop tard pour le convoi de huit heures.

Rassurez-vous, Monsieur, nous ne sommes jamais en retard.

Nous voici à la gare.

Ամէն բան պատրաստ է:

Բեռնակիր մը կանչեցէք որ կահերս տանի:

Երկաթուղոյն համակառքը պիտի առնուի:

Այս կահերը համակառքին պաշտօնարանը տար:

Ե՞րբ ձամբայ կելլէք:

Հինգ վայրկենէն ձամբայ կելլենք, Պարոն:

Հրամայեցէք, կառք մը տէք:

Ինձի կերելայ քէշատ ուշ է:

Ո՞րչափ առնենէն երկաթուղին կը հասնինք:

Քառորդէ մը կը հասնինք:

Վախեմք քէ ժամը որին ելամ շոգեկառքին ջհասնիք:

Մի վախէք, Պարոն, ոչ երբէք ուշ կը հասնինք:

Ահա երկաթուղոյն կայարանը հասանք:

Le convoi partira dans cinq minutes.

Prenez vite votre bulletin.

Quelle place prenez-vous?

Je prendrai une place de première classe.

J'irai dans une voiture de deuxième classe.

Quels effets avez-vous, Monsieur?

J'ai deux malles, un sac de nuit et un carton à chapeau.

Ayez bien soin du carton à chapeau.

MÊME SUJET.

Voici la locomotive qui doit nous traîner.

Nous avons deux locomotives.

Il faut une très-grande force pour traîner un convoi de vingt-cinq voitures.

Հինգ վայրկեանէն շոգեկառքը ճամբայ պիտի ելլէ:

Շուտ ըրէք բոլորնիդ առէք:

Ի՞նչ տեղ պիտի ըրնէք:

Առաջին կարգի տեղ պիտի առնեմ:

Երկրորդ աստիճանի կառքի մը մեջ մտնեմ:

Ի՞նչ կան ունիք, Պարոն:

Երկու արկղ ունիմ, քսակ մը ու գլխարկի աման մը:

Գլխարկի ամանին արդէկ ուշ դիր:

ՆՈՅՆ.

Ահա գմեղ տանող շոգեգործին:

Երկու շոգեգործի ունինք:

Մեծ ոյժ պէտք է քսանընիւնդ կառք քաշելու համար:

Quelle est la force de ces machines?

Elles sont chacune de la force de vingt chevaux.

Allons-nous par le trajet direct?

Non, celui-ci est le trajet à stations.

A quelle heure part le convoi de marchandises?

Il y en a deux par jour: l'un part à dix heures du matin, et l'autre à trois heures de l'après-midi.

Votre ami vient-il avec nous?

Non, il part à midi.

Fera-t-il un long séjour à...?

Il n'y restera pas, il compte revenir demain soir.

En voiture, Messieurs.

Dépêchez-vous, le convoi part à l'instant.

Je préfère aller sur l'impériale.

Այս մեքենաներուն ոյժն ինչ է:

Ամէն մէկը քսան ձիու ոյժ ունի:

Առանց կենալու շիտակ պիտի երթանք:

Չէ, ասիկայ ճամբան տեղ տեղ կը կենայ:

Ապրանք տանող կառքերը քանի՞ն ճամբայ կ'ելլեն:

Օրը երկու անգամ կ'ելլեն. մէկը առաւօտը տասնին, մէկայը կէսօրուրէ ետքը երեքին:

Ձեր բարեկամնիդ մեզի հետ պիտի գայ:

Չէ, կէսօրը ճամբայ պիտի ելլէ:

Այս ինչ տեղը շատ պիտի կենայ:

Շատ պիտի չկենայ. վաղը իրիկուն դառնալու միտք ունի:

Կառք մտէք, Պարոններ:

Շուտ ըրէք, քիչ ատենէն շոգեկառքը ճամբայ պիտի ելլէ:

Աւելի կը սիրեմ կառքին վերայ նստիլ:

Montez vite, Monsieur  
Voilà le signal du départ.  
Nous voilà partis.

Հուտ ելիք, Պարոն :  
Ահա ճամբայ ելլելու  
նշանը :  
Ահա ճամբայ ելանք :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Nous sommes déjà loin  
de l'embarcadère.

Ասանկ ինչ շուտով  
հեռացանք կայա-  
րանեն :

Nous avons déjà fait  
quatre ou cinq lieues

Մեկեն չորս հինգ  
փարսախ տեղ ճամ-  
բայ բրինք :

Nous avons fait juste  
six milles.

Ճիշդ վեց մղոն տեղ  
կորեր ենք :

Nous avons mis deux  
minutes à faire le  
dernier mille.

Վերջի մղոնն երկու  
վայրկենի մեջ բ-  
րինք :

Nous faisons un mille  
et demi par minute.

Ամեն մեկ վայրկենին  
մեկ ու կես մղոն  
ճամբայ կրնենք :

C'est voyager rapide-  
ment.

Ասկեց շուտ ճամբոր-  
դութեն ընել ջը-  
լար :

L'autre jour nous n'a-  
vons mis que deux  
minutes et demie  
pour faire un lieue.

Անցեալ օր երկուք  
ու կես վայրկենի  
մեջ մեկ փարսախ  
բրինք :

Une telle vitesse me  
ferait peur.

Այնչափ արագութե-  
նեն կը վախնամ :

Pour ma part j'aime  
aller vite.

Ես շուտ երբայ շատ  
կը սիրեմ :

Plus nous allons vite,  
plus je suis content.

Որչափ շուտ երբանք'  
այնչափ աւելի կը  
սիրեմ :

Il me semble que nous  
avançons en ce mo-  
ment avec une vitesse  
prodigieuse.

Ինձի կերեալ որ հի-  
մա կարգէ դուրս  
արագութեամբ կեր-  
բանք :

Véritablement je com-  
mence à avoir peur.

Իրաւընեկ ես սկսայ  
վախնալ :

Je crains que la ma-  
chine ne sorte des  
rails.

Կը վախնամ որ մե-  
քենան երկարնե-  
րուն վրայէն դուրս  
ջցառքէ :

Ne craignez rien.  
Nous sommes terrible-  
ment secoués.

Մի վախնաք :  
Շուկալի կերպով ցըն-  
ցուեցանք :

C'est parceque nous  
sommes loin de la  
locomotive.

Վասն գի շոգեգոր-  
ծիեն շատ հեռու  
ենք :

Il y a douze voitures,  
entre la nôtre et la  
locomotive.

Մերինին ու շոգեգոր-  
ծույն մեշտեղը տա-  
տերկու կառք կայ :

Voici un convoi qui  
vient.

Ահա ուրիշ շոգեկառք  
մը կուգայ :

C'est le convoi de re-  
tour.

Դարձի շոգեկառքն է :

On dirait qu'il est sur  
notre voie.

Կարծես քէ մեր ճամ-  
բուն վերայ է :

Ne vous alarmez pas ;  
les convois de retour  
vont toujours sur  
l'autre ligne, et les  
convois d'aller sur  
celle-ci.

Մի խոովիք. դարձի  
շոգեկառքերը միշտ  
մեկայ գծին վրայէն  
կերբան, իսկ գնա-  
ցողներն աւար վրա-  
յէն :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

Nous voici arrivés à la première station.

Ահա առաջին հաս-  
տիցը հասանք :

Combien de temps resterons-nous ici ?

Հոս որչափ ատեն պի-  
տի կենանք :

Nous n'y resterons que trois minutes.

Երեք վայրկենն ատե-  
լի չենք կենար :

Il y a beaucoup de voyageurs qui attendent à la gare.

Կայարանը սպասող  
շատ ճամբորդ կայ :

Nous voilà partis de nouveau.

Ահա նորեն ճամբայ  
ելանք :

Qu'est-ce que je vois devant nous ?

Առջեւնիս ինչ է որ  
կը տեսնեմ :

C'est un souterrain.

Ներքնուղի մըն է :

Nous sommes dans l'obscurité.

Մութի մեջ ենք :

Nous en serons bientôt sortis, car le souterrain n'est pas très-long.

Մեզն շուտով կե-  
լենք, վասն զի  
ներքնուղին շատ  
երկայն չէ :

Il me paraît au contraire très-long.

Ընդհակառակն ինձի  
շատ երկայն կե-  
րեայ :

Après celui-ci nous en aurons un d'une demi-lieue à parcourir.

Ասկէց ետքը ուրիշ մը  
պիտի գայ որ կես  
փարսախ է :

Voici encore une station: nous y arrêtons-nous ?

Ահա ուրիշ հանգույց  
մըն ալ. հոս պի-  
տի կենանք :

Oui, nous allons y rester cinq minutes.

Այո, հոս հինգ վայր-  
կեան պիտի կե-  
նանք :

Où sommes-nous à présent ?

Հիմա ո՞ր ենք :

On dirait que nous sommes suspendus en l'air.

Կարծես քեզ օդի մեջ  
կախուած ենք :

Nous passons sur un viaduc.

Կամուրջի մը վրայէն  
կանցնինք :

Voici l'avant-dernière station.

Ահա վերջընքեր հան-  
գույցը :

Nous avons encore un pont à passer.

Կամուրջ մըն ալ ու-  
նինք անցնելու :

Nous serons bientôt au terme de notre voyage.

Քիչ ատենէն ճամբոր-  
դութիւննիս պիտի  
յնրնայ :

Cette station est la dernière.

Այս հանգույցը վեր-  
ջինն է :

Nous voici enfin au débarcadère.

Ահա վերջապէս կայ-  
արանը հասանք :

Veillez me remettre votre bulletin, Monsieur.

Թղթերնիդ ինձի տա-  
լիք, Պարոն :

Le voici.

Ահաասիկ :

Allons chercher nos effets.

Երբանք կաներնիս  
առնունք :

Dépêchons-nous d'arriver à l'omnibus, autrement nous ne trouverons pas de place.

Շուտ ընենք համա-  
կառքին հասնինք,  
սպա քեզ ոչ տեղ  
չենք գտնար :

L'EMBARQUEMENT. ՆԱԽԱՐԿՈՒԹՒԻՒՆ.

Quand partez-vous pour la France? Ե՞րբ Գաղղիա պիտի երթաք:  
 Je partirai dans deux jours. Երկու օրեն պիտի երթամ:  
 Où vous embarquerez-vous? Ո՞ւր նա պիտի մըտնաք:  
 J'ai l'intention de prendre le bateau à vapeur du pont de Londres. Միտք ունիմ Լոնտրայի կամրջին քովեն շոգենաւ մըտնելու:  
 Avez-vous votre passeport? Անցագիրնիդ առած էք:  
 J'ai été le chercher ce matin. Այս առաւօտ գնացի առի:  
 Je vous conseille d'aller arrêter votre place immédiatement. Զեզի խորհուրդ կուտամ որ մեկէն երթաք տեղերնիդ բռնեք:  
 Si vous tardez plus longtemps, vous ne trouverez peut-être pas de case. Թեոր աւելի ուշանաք՝ հաւանական է որ խորշ չգտնեք:  
 Prenez-vous une première ou une seconde place? Առաջին տեղ պիտի բռնեք թէ երկրորդ:  
 Quels sont les prix des places? Տեղերուն գինն ինչ է:  
 Les premières sont de vingt-six francs et les secondes de dix-sept. Առաջիններն են քսանընգ ֆրանք, երկրորդները տասներեօրը:

Les premières sont d'une guinée et les secondes de dix-sept schellings. Առաջիններն մեկ կիւնէ են, իսկ երկրորդները տասներեօր շիլին:  
 Prenons les premières places. Առաջիններէն առնունք:  
 A quelle heure le bateau part-il? Շոգենաւը քանիին կելլէ:  
 Il part à quatre heures de l'après-midi. Կեսօրուրեն ետքը ժամը չորսին կելլէ:  
 Où sont vos effets? Կանքերիդ ո՞ւր են:  
 Je les ai déjà envoyés au port. Զաննք առաջուց նաւահանգիստը զըր կեցի:  
 Vous avez très-bien fait. Շատ աղեկ ըրեր էք:  
 Avez-vous été à bord pour arrêter votre case? Նաւը գնացիք խորշերնիդ բռնելու:  
 J'en ai une excellente. Շատ գեղեցիկ խորշ մը ունիմ:  
 C'est bien. Maintenant vous pouvez faire la traversée en dormant. Շատ աղեկ: Հիմա կըրնաք քնանալով անցնիլ ծովը:  
 J'aime toujours à passer la nuit sur mer, car j'y gagne une journée. Միշտ կուգեմ որ գիշերանց ծովն անցնիմ, վասն զի անով որ մը կը վաստըկիմ:  
 Combien vous faut-il de temps en général pour faire la traversée? Սովորաբար հրջափ ատենի մեջ ծովը կանցնիք:  
 Nous mettons ordinairement... Լոնտրայի կամրջին

rement de douze à quatorze heures pour aller du pont de Londres à Boulogne.

Պուլոյն երբայու համար սովորաբար տասուներկու տասներորս ժամ պետք է մեզի :

Ne perdez pas de temps le bateau partira dans une demi-heure.

Ժամանակ մի կորսուցընէք. կես ժամէն նաւը կելլէ :

MÊME SUJET.

ՆՈՅՆ.

On va partir. J'entens la cloche.

Համբայ կելլեն : Զանգակի ձայն կը լսեմ :

Marchons plus vite. Le bateau pourrait partir sans nous. Nous voici embarqués.

Աւելի շուտ քայլենք : Նաւը մեզի չսպասեր կերբայ : Ահա նաւ մտանք :

Messieurs, sortez du bateau, s'il vous plaît, nous partons à l'instant.

Պարոնայք, նաւէն դուրս հրամեցէք, ձամբայ պիտի ելլենք :

Allons, il faut nous séparer.

Երբանք, պետք որ բաժնուինք :

Je vous souhaite un bon voyage.

Բարի ձանապարհ :

Je vous remercie.

Շնորհակալ եմ :

Ecrivez-moi promptement.

Շուտով ինձի բուրբ գրեցէք :

Certainement.

Անոր տարակոյս չըկայ :

Descendons à la chambre.

Անենակը իջնանք :

Où est ma case ?

Խորշս ո՞ր է :

La voici, Monsieur ; votre nom y est écrit.

Ահա ապիկ, Պարոն, անուննիդ վերան գրուած է :

Veillez mettre mon sac de nuit dans ma case.

Գիշերուան քսակս խորշիս մէջը դնէիք :

Nous voilà partis. Entendez-vous le bruit de la machine ?

Ահա ձամբայ ելանք : Մեքենային ձայնը կը լսէք :

Elle fait trembler tout le bateau.

Բոլոր նաւը կը սարսէ :

Allons sur le pont. Quel est cet homme debout sur le tambour ?

Նաոււն վերայ կլլենք : Դիտանոցին վերայ կեցած մարդն ո՞վ է :

C'est le capitaine ; il y monte pour donner ses ordres.

Նաւապետն է. հրամանները տալու համար հոն կելլէ :

PENDANT LA TRAVERSE.

ԾՈՎՈՒ ՎԵՐՍՅ.

La marée est forte.

Ծովուն մակընթացութիւնը սաստիկ է :

Nous allons rapidement.

Շատ շուտ կերբանք :

Nous n'irons pas si vite quand nous serons en pleine mer.

Երբոր ծովուն խորքացուիք՝ ասանկ արագ չենք երբար :

L'eau est calme ici.

Զուրկ հոս հանդարտ է :

Nous voici à l'embouchure de la Tamise.

Ահա Թամիզին բերանը հասանք :

La mer est grosse. Allez-vous hisser la voile ?

Ծովը այնկոճ է : Առազատս պիտի բանար :

Non ; le vent nous est contraire.

Չէ . քամին մեզի դեմ է :

Tant pis ; la traversée sera longue.

Ան է գեշը . ծովուն վերայ պիտի ուշանանք :

Je vais à la chambre ; je neme sens pas tout à fait à mon aise.

Սենեակը կիջնամ . շատ աղեկ չեմ :

Qu'avez-vous ? J'aurai le mal de mer si je reste plus longtemps sur le pont.

Ի՞նչ ունիք : Թեոր նաւուն վերայ աւելի կենամ , ծովը գիս պիտի բռնէ :

Quant à moi, je ne suis pas sujet au mal de mer.

Ձիս ամենեւին ծովը չբռնէր :

Je voudrais pouvoir en dire autant.

Երանիք քէ գիս ալ չբռնէր :

Comment avez-vous passé la nuit ?

Գիշերն ինչպէս անցուցիք :

Assez mal ; la machine ne m'a pas laissé dormir.

Գեշ . մեքենան չբողուց որ քնանամ :

Il fait jour.

Լուսացեր է :

Où sommes-nous ?

Ո՞ւր ենք :

Nous allons bientôt apercevoir la côte.

Քիչ ատենէն ծովեզերքը պիտի երևնայ :

La mer est plus calme.

Ծովն աւելի հանդարտ է :

Le vent est moins fort qu'il ne l'était.

Քամին առաջուան պէս սաստիկ չէ :

Nous allons très-vite.

Շատ շուտ կերբանք :

Combien filons-nous de nœuds à l'heure ?

Ժամը քանի հանգոյց կրնենք :

Demandons-le au timonnier.

Ղեկավարին հարցնենք :

Nous filons dix nœuds à l'heure.

Ժամը տասը հանգոյց կրնենք :

Je crois que j'aperçois la côte.

Կարծեմ քէ ծովեզերքը կը տեսնեմ :

Nous serons bientôt arrivés.

Քիչ ատենէն կը հասնինք :

Nous y voilà.

Ահա հասանք :

LE DÉBARQUEMENT

ՆԱԻԷՆ ԵԼԼԵԼԸ.

Dieu merci, nous voici arrivés sains et saufs.

Փառք աստուծոյ , որջ առողջ հասանք :

Quelle heure est-il ? Il est huit heures.

Ժամը քանի է : Ժամը ութն է :

Nous avons mis seize heures à faire la traversée.

Նաւարկութիւննիս տասնըվեց ժամ տներ է :

Nous ne pouvons pas entrer au port.

Չենք կրնար նաւահանգիստը մտնել :

La marée est basse.

Ծովը քաշուած է :

Messieurs, vous serez obligés de débarquer en chaloupe.

Պարոնայք , հարկ պիտի ըլլայ որ մակուկով ցամաքն ելէք :

Le bateau ne pourra entrer au port que dans deux heures.

Voici les douaniers.

Messieurs, veuillez me remettre vos passe-ports.

Venez à la douane.

Vos effets seront visités dans trois heures.

Ce délai est fort désagréable.

Ne me rendrez-vous pas mon passe-port?

On vous le rendra à Paris, à la préfecture de police.

On vous délivrera ici une passe provisoire qui doit être visée par le consul d'Angleterre.

Tout cela est fort désagréable et fait perdre beaucoup de temps.

Il est temps d'aller chercher nos effets à la douane.

Շատը երկու ժամեն միայն կրնայ նաւահանգիստը մտնել :

Ահա մաքսատուք :

Պարոններ, անցագիրնիդ ինձի տալէք :

Մաքսատունն ելէք : Երեք ժամեն կաներնիդ պիտի նայուին :

Այսչափ ուշանալը շատ անախորժ բան է :

Անցագիրս ինձի պիտի չտա՞ք :

Փարիզ կուտան ձեզի բարեկարգութեան պաշտօնարանը :

Հոս ձեզի առժամանակեայ անցք մը կուտան որ Անգղիոյ հիւպատոսին ստորագրել պիտի տրուի :

Ասոնք անախորժ բաներ են, ու շատ ժամանակ կորսնցրնել կուտան :

Հիմա ժամանակն է որ երբանք բաներնիս մաքսատունն առնենք :

Voulez-vous visiter cette malle tout de suite, s'il vous plait?

Prenez bien garde de rien abimer.

Maintenant, dites-moi, connaissez-vous un bon hôtel?

Pouvez-vous m'indiquer un bon hôtel?

Dites-moi, je vous prie, quel est le meilleur hôtel?

Il y en a plusieurs excellents.

Faites-moi le plaisir de m'indiquer le meilleur.

Vous pouvez aller à l'hôtel d'Angleterre en toute sûreté.

Vous y serez très-bien. Dans quelle rue est-ce?

De quel côté est-ce?

Si vous le désirez, je vais vous y conduire.

Կրնա՞ք շուտ մը սա սնտուկը նայիլ :

Զգուշացէք որ բան մը չաւրուի :

Հիմա բւէք ինձի բէլա պանդոկ մը կը ձանաչէք :

Կրնա՞ք ինձի լաւ պանդոկ մը ցուցընել :

Ինձի գրուցէիք բէամենեն լաւ պանդոկն որն է :

Աղէկ պանդոկ շատ կայ :

Խնդրեմ, լաւագոյնը որն է ինձի ցուցընէք :

Կրնաք ապահովապէս Անգղիոյ պանդոկն երբայ :

Շատ գոն կրնայք հոն . ո՞ր փողոցն է :

Ո՞ր կողմն է :

Թեոր կուգէք, զձեզ հոն տանիմ :

A UN HOTEL.

ՊԵՏԴՈՎ.

Messieurs, voici un hôtel qui a assez bonne apparence.

Պարոնայք, ահա պանդոկ մը որ երբանոյրը աղէկ է :

Descendrons-nous ici?  
Entrons : nous ne pouvons risquer que de passer une mauvaise nuit.

Peut-on souper chez vous?

Avez-vous des chambres libres?

Pouvons-nous coucher ici?

Pouvez-vous nous donner à coucher pour cette nuit?

Pouvez-vous nous loger pour cette nuit?

Oui, Messieurs; vous trouverez ici de belles chambres et de bons lits.

Je ne me soucie pas de la chambre, pourvu que le lit soit bon.

Vous ne pouvez trouver nulle part de meilleurs lits.

Surtout, faites-nous bon feu, car nous sommes transis de froid.

Garçon, conduisez ces messieurs dans le grand salon, et faites-y du feu tout de suite.

Հոս կիջնանք :  
Մտնենք. շատ շատ մեկ գիշեր մը ամանակիստ պիտի ըլլանք :

Հոս կրնանք ընթրել :

Պարապ սենեակներ ունինք :

Հոս կրնանք պատկի :

Կրնա՞ք մեզի այս գիշերուան պատկելու տեղ տալ :

Այս գիշեր կրնա՞ք մեզ հոս բնակեցընել :

Այո, Պարոններ, կրնաք հոս գեղեցիկ սենեակներ ու լաւ անկողիններ գտնել :

Սենեակը հոգս չէ, բաւական է որ անկողինն լաւ ըլլայ :

Ասկէց աղէկ անկողին ուրիշ տեղ չէք կրնար գտնել :

Ամենէն աւելի մեզի լաւ կրակ մը վառեցէք, վասն զի շատ մսած ենք :

Մանչ, այս պարոնայքը մեծ սրահը տար. ու շուտ մը կրակ վառե հոն :

AVEC UN GARÇON D'ÉCURIE.

ՉԻԱՊՍՆԻ ՀԵՏ.

Messieurs, nous ferons bien d'aller voir si nos chevaux ne manquent de rien.

Պարոնայք, լաւ կրնենք բերք երբանք նայինք թէ ձիերնու բան մը պակմա է թէ չէ :

C'est fort bien pensé. Où est le garçon d'écurie?

Շատ լաւ մտածեր էք : Ձիապանն ո՞ւր է :

Me voici, Messieurs.

Ահա հոս եմ, Պարոններ :

Où sont nos chevaux?

Ձիերնիս ո՞ւր են :

Ils sont à l'écurie.

Ախտան են :

Ont-ils mangé l'avoine?

Վարասակ կերան :

Vous n'avez pas eu soin de les bouchonner comme il faut.

Վարանին յարդով աղէկ չես շփած :

Vous ne leur avez pas lavé les pieds.

Ոտքերնին չես լուացած :

Ils sont encore tout crottés.

Դեռ ցեխոտ են :

Lavez-les sur-le-champ, et essuyez-les proprement avec de la paille.

Շուտ ըրէ լուա ձիերը, ու յարդով լաւ մը սրբէ :

Les avez-vous menés à l'abreuvoir?

Ձուր խմելու տարիլ :

Les avez-vous fait boire?

Ձուր խմցուցիլ :

Donnez-leur une botte de foin, et de la paille fraîche.

Տրցակ մը չոր խոտ ու դալար յարդ տուր իրենց :

Demain matin vous leur  
donnerez encore une  
mesure d'avoine.

Վարդ առաւօտ նորէն  
իրենց չափ մը վար-  
սակ տուր :

Voyez si tous les fers  
sont bons.

Նայէ քէ պայտերը  
ամենն ալ աղէկ են :

Voyez s'il ne manque  
rien aux fers.

Նայէ քէ պայտերուն  
վերայ պակաս բան  
կ'ալ :

En voici un qui pourra  
bien manquer sur la  
route.

Ահա ասիկայ կրնայ  
ձամբան իյնալ :

Menez mon cheval chez  
le maréchal, et faites-  
le referrer sur-le-  
champ.

Զիս պայտառին տար,  
ու շոտող ոտքին  
երկար դնել տուր :

AVEC LE MAITRE  
D'UN HOTEL.

ՊԱՆԴՈՎԱՊԵՏԻ ՀԵՏ.

Messieurs, que désirez-  
vous pour votre sou-  
per ?

Պարոնայք, ձեր ըն-  
քրեացը համար ինչ  
կուգէք :

Messieurs, ne désirez-  
vous pas souper ?

Պարոնայք, չէք ու-  
գեր ընքրիք ընել :

Qu'avez-vous à nous  
donner ?

Մեզի ինչ կրնաք տալ :

Avez vous quelque  
chose à nous don-  
ner ?

Մեզի տալու բան մը  
ունիք :

J'ai un gigot de mou-  
ton, un pâté de ca-  
nards, et de la vo-  
laille froide.

Ոչխարի գիստ մը ու-  
նիմ, բաղի մսով  
կարկանդակ մը ու  
պաղ հաւու միս :

Ou, si vous l'aimez  
